PRESS RELEASE

Հայաստանի պատմության վերակառուցումը դժվարին խնդիր է մի քանի առումներով: Պատմական արժեքավոր փաստարկների մի ահռելի բաժին ոչնչացվել կամ անհետացել է հայկական երկրամասում բազմաթիվ արշավանքների և երկրաշարժերի հետևանքով: Բացի այդ, հարևան երկրների միջև պատմական Հայաստանի ներկայիս պատմաքաղաքական բաժանման արդյունքում արխիվային և հնագիտական ուսումնասիրությունները դարձել են նրբախնդիր և, հաճախ, դժվար իրագործելի: Տարիների ընթացքում հարկադիր թե կամավոր համասփռումը հանգեցրել է աշխարհով մեկ տարածված հայկական խոշոր սփյուռքի ձևավորմանը:

Առաջին անգամ ներկայացվում է պատմական Հայաստանի գենետիկական քարտեզագրման արդյունքները: Քարտեզը վերարտադրում է հայկական գենոֆոնդի հարուստ աշխարհագրական խճանկարը, որը ձևավորվել և հազարամյակների ընթացքում բարգավաճել է Հայկական լեռնաշխարհի տարածքում:

Սերնդեսերունդ մենք ենթարկվում ենք մեր նախնիների ծննդավայրերի մասին գենետիկական հիշողության անդառնալի կորստի վտանգին: Ուստի այս նախաձեռնությունը բացառիկ հնարավորություն է՝ անմահացնելու հայերի բազմադարյա ժառանգությունը՝ դրանով իսկ ստեղծելով ուրույն «Գենետիկական հուշամատյան»: